

\*\*\*

Ամռան տապը սկսում է նվազել, զիջել զովությանը: Արևը սկսում է ջերմացնել ավելի սակավ, օդը սկսում է մաքրվել ճանճերից ու մոծակներից: Ծառերը դադարում են շնչել այնպես լիաթոք, այնպես առողջ, ինչպես առաջ: Մերթ ընդ մերթ երկնքում երևում են տաք վայրեր որոնող թռչունների երամները ու լսվում են նրանց կոխնչները: Արև ուղի է որոնում ամպերը ճեղքելու ու իր կցկտուր ճաճանչներով ճրագելու դալկացած աշխարհը, սակայն տեղի է տալիս, ու ամպերը անձրև են առագում ու ռոռոգում երկիրը՝ թարմացնելով էլեկտրականացած օդը: Գունապաճույճ տերևները սոսափյունով գալարվում են ճյուղերից ցած ու գետնին գոյանում է բազմաբղետ ու նախշագարդ մի գորգ: Քամին զարնվում է ունայնահանդերձ ծառերի ճյուղերին՝ սաստկացնելով աշխարհին տիրած թախիծը: Աշխարհը թաղվում է մշուշի մեջ ու հեզ տխրություն է տիրում նրան: Բնությունը հուսահատ կարոտով վերջին անգամ նայում է հեռավոր, բայց ջերմ արևին ու հրաժեշտ տալիս նրան:

### **Էքսկուրսիա դեպի տիեզերք**

Բյուրավոր բոցեր են անցնում անկասելի սլացքով: Ու ես խոյանում եմ դեպի դրանց անընդհատ հոսքի շլացուցիչ աղբյուրը: Հանկարծ՝ մխրճվելով դրա մեջ՝ նետվում եմ մի անեզր անսահմանություն, որտեղ նույնիսկ ի՛նքը, ժամանակն է մոլորվել: Դա տիեզերքն է: Մի կուրացուցիչ աստղաբույլ հոսում է տարածության մեջ: Աչքս սևեռելով հեռուն ես նկատում եմ վիթխարի շրջանով պտտվող լուսատուների բազմությունը: Ուշադրություն դարձնելով դրանց պտտման առարկային՝ նշմարում եմ մի սև շրջապտույտ: Ավելի հանգամանորեն գննելով տեսնում եմ, որ ամեն ինչ պտտվելով ներհոսում է դրա մեջ ու անէանում: Դա տիեզերքի կենտրոնն է: Այստեղ ամեն ինչ պտտվում է: Այստեղ չկա ժամանակ, չկա չափ, չկա սահման: Այստեղ գոյություն չունեն հեռու-մոտիկ, բարձր-ցածր, մեծ-փոքր: Ես՝ այդ տեսարանից շջմած, դադարում եմ մտածել: Մոռանում եմ այն ամենն ինչ գիտեմ, մոռանում եմ ուրախանալ ու տխրել, հոգնել ու հանգստանալ, ես նույնիսկ մտածելն եմ մոռանում, ու միայն ակնահակ նայում եմ այս հավերժական ու անվերջանալի շարժմանը, այս անսահմանությանը, ու նորից ընկնում եմ աստղերի սլացքի մեջ, հալվում, ոչնչանում եմ հավիտենության տարափի մեջ:

\*\*\*

Մարդու հոգին անքակտելիորեն կապված է տիեզերքի ու տիեզերականի հետ: Այն միշտ ձգտում է հեռավորին, անհասանելիին, ձգտում է հավերժականին: Այն ձգտում է միաձուլվել գաղտնիքին, տիրել դրան, բացել ու փորել այն: Իսկ տիեզերքն ինքնին գաղտնիք է: Իսկ գաղտնիքն ինքնին տիեզերք է: Տիեզերքը նման է հորիզոնին. ինչքան մոտենում ես, այնքան հեռանում է, ինչքան հեռանում ես, այնքան մոտենում է: Այն միշտ չվերժանված առեղծվածներ է թողնում, իսկ բացահայտելով նորերը մենք հայտնաբերում ենք ուրիշ խնդիրներ, ու նորից ծարավում ենք ու այդպես տոչորված էլ մնում:

\*\*\*

Ազգայնականությունը՝ դա մեր կյանքի գաղափարն է: Այն մարդը, ով չի սիրում և չի ընդունում իր ազգությունը, նա դադարում է մարդ լինելուց: